

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

Ես՝ Լիլիթ Աշոտի Հայրապետյան, 2019 թվականի սեպտեմբերի 23-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1) Mulberry2 էլեկտրոնային համակարգով պատրաստել եմ մոտավորապես 60 փաստաթղթեր (արտաքին և ներքին շրջանառության):

2) ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ (այսուհետ նաև Որոշում) հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ուղղվածության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրում ներառված 2019 թվականին, ինչպես նաև 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրագործման վերաբերյալ հաշվետվությունը:

3) մշակել, շրջանառել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 306-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման (այսուհետ՝ Որոշում) նախագիծը, որով առաջարկվում է հայտարարատու պաշտոնատար անձին, նրա խնամակալության կամ հոգեբարձության տակ գտնող անձանց, հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամին եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ազգանունը հրապարակելիս որպես բացառություն նախատեսել բանկային ավանդի դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը վճարող կազմակերպության անվանման կամ ֆիզիկական անձի

անվան, հայրանվան, ազգանվան համար: Առաջարկվում է նաև Որոշման հավելվածի 2-րդ կետի 15-րդ ենթակետից 23-րդ ենթակետում կատարված հղումներում կատարել փոփոխություններ և համապատասխանեցնել նորմերի բովանդակությանը:

4) մշակել, շրջանառել և ամփոփել եմ հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում քննարկման ենթակա հարցերի օրակարգը:

5) միջազգային համագործակցության շրջանակներում, այդ թվում՝ 2019 թվականի նոյեմբերի 24-28-ը Կիև կատարած հակակոռուպցիոն ճանաչողական այցի արդյունքում ուսումնասիրել եմ մի շարք պետությունների հակակոռուպցիոն մարմինների կառուցվածքը, կոռուպցիայի դեմ պայքարում նրանց կուտակած փորձը:

6) մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը:

7) մշակել, շրջանառել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրի ու հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրի օրինակելի ձևերը հաստատելու և ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման, «Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-ն

որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը:

8) Մասնակցել եմ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին, որով նախատեսվում է ընդլայնել հայտարարատու անձանց և հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը, վերանայել հայտարարատու պաշտոնատար անձանց ցանկը: Ինչպես նաև առաջարկվում է սահմանել ծախսերի, փաստացի տիրապետվող գույքի հայտարարագրման պարտականություն, գույքի հայտարարագրման շրջանակներում վերանայել օրենքով սահմանված թանկարժեք գույքի դրամական շեմը և այլ կարգավորումներ:

9) Համակարգել և իրականացրել եմ 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշումից բխող միջազգային փորձի ուսումնասիրություն, միջոցառումների կատարմանն ուղղված այլ գործողություններ:

10) Ընդգրկվել եմ տեղական ինքնակառավարման համակարգի քաղաքական բարեվարքության և էթիկայի աշխատանքային խմբում, ինչպես նաև հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության հաշվետվողականության և բարեվարքության խմբում և ակտիվորեն մասնակցել վերջիններիս գործունեությանը:

Հայրապետյան Լիլիթ՝

23.09.2020

